ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ

ԱՌԱՐԿԱ ԴԱՍՎԱՐ (ՄԱՅՐԵՆԻ, ՄԱԹԵՄԱՏԻԿԱ)

ՀԵՂԻՆԱԿ Վալենտինա Պետրոսյան

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ Վաղատուրի միջնակարգ դպրոց դպրոց

Աշխատանքը թույլատրված է պաշտպանության

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՏ. ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. Ս. Ալավերդյան, ԳՊՀ դասախոս

ԳՈՐԻՍ 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն……....3

Ի՞նչ է քննադատական մտածողությունը …….....4

Սովորողների քննադատական մտածողություն զարգացումը մայրենիի ուսուցման գործընթացում……11

Եզրակացություններ……..18

Օգտագործած գրականության ցանկ……..19

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հետազոտական աշխատանքի արդիականությունը: Ապացուցված է, որ կրտսեր դպրոցական տարիքի երեխաները Ի վիճակի են, իրենց զարգացման մակարդակին համապատասխան, կատարելու բարդ մտածական գործողություններ, ինչի շնորհիվ մտածողության քննադատականությունը սովորողի հաջող ուսուցման պայման է դառնում: Դրա բացակայության պայմաններում սովորողը ամբողջությամբ կախված է լինում արտաքին հանգամանքներից, մշտապես ունենում է ղեկավարվելու, վերահսկվելու կարիք, ինչն էլ նրան դարձնում է <<ուրիշի կամքի>> կամակատարը: Ըստ Դ. Խալպերի՝ քննադատական մտածողությունը մի ռազմավարություն է, որը մեծացնում է ցանկալի վերջնարդյունք ստանալուհավանականությունը: Քննադատական մտածողության ձևավորման և զարգացման ընթացքում հիմնական ուշադրությունն ուղղված է անձի և աշխարհի նկատմամբ հիմնարար հարաբերությունների կառուցմանը. Ինչը ենթադրում է զանազան, ինքնուրույն իմաստավորված դիրքորոշում /վիճակ/:

Հետազոտական աշխատանքի նպատակն է ցույց տալ, որ քննադատական մտածողությունը սկսվում է հարցադրմամբ և լուծվելիք խնդրի պարզաբանմամբ . Ամերիկացի փիլիսոփա և մանկավարժ Ջ, Դրուին համարում է , որ քննադատական մտածողությունը ծագում է այն ժամանակ, երբ սովորողները զբաղվում են կոնկրետ հիմնախնդիրներով: Մանկավարժների կարծիքով ուսուցումը կլինի արդյունավետ, երբ սովորողները, ելնելով կյանքի փորձից ձգտեն ձևակերպել խնդիրները և

յուրացրած գիտելիքների հիման վրա լուծեն դրանք ինքնուրույն:

Քննադատական մտածողությունը հիմնված է համոզիչ փաստարկների հիման վրա . Քննադատաբար մտածող աշակերտը գտնում է խնդրի սեփական լուծում և այն ամրագրում ողջամիտ ու համոզիչ փաստարկներով: Նա գիտակցում է, որ հնարավոր է միևնույն խնդրի այլ լուծումներ և փորձում է ապացուցել իր ընտրած լուծման ամենատրամաբանական լինելը:

Քննադատական մտածողությունը սոցիալական մտածողություն է: Երբ որևէ միտք կիսում ես ուրիշի հետ , այն նախօրոք ստուգվում և հղկվում է: Այդ իսկ պատճառով

քննադատական մտածողության զարգացման տեխնոլոգիան դասի ընթացքում կիրառելիս նպատակահարմար է օգտագործել անհատական, զույգերով, խմբային աշխատանքի տարբեր ձևեր , ինչպես նաև բանավեճի տարրեր: Զույգերով կամ խմբերով աշխատելիս աշակերտները լուծում են ստեղծագործական բնույթի առավել բարդ խնդիրներ:

Կարծիքների արդյունավետ փոխանակման ընթացքում սովորողները ձեռք են բերում այնպիսի հատկանիշներ , ինչպիսիք են՝ ուրիշին լսելու կարողությունը , սեփական տեսակետի ձևավորումը և պաշտպանումը:

Ի՞ՆՉ Է ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Քննադատական մտածողությունը հիմնարար կրթության ռազմավարական հիմքն է, իսկ ուսուցիչն այդ գործընթացում հիմնական օղակն է. Նա կարող է կա՛մ նպաստել, կա՛մ խոչընդոտել քննադատական մտածողության զարգացմանը: Մաթեմատիկա դասավանդող ուսուցիչը պետք է ոչ միայն ծանոթացնի խնդրի լուծման կանոններին և հնարներին , այլև առաջին հերթին սովորեցնի կողմնորոշվել տեղեկատվության բազմազանության մեջ, տարբերակել կեղծ ու հավաստի վարկածները, գտնել սխալի պատճառը, այսինքն զարգացնել քննադատական մտածողություն: Ուսոցչի համար այս խնդիրը նորովի է լուսաբանվում ՝ դրա առավել արդիական լինելու պատճառով:

Քննադատական մտածողությունը բազմաթիվ կարողությունների և հմտություններին ամբողջություն է, ինչը ձևավորվում է աստիճանաբար երեխայի ուսուցման և զարգացման ընթացքում: Այն առավել արագ է ձևավորվում, եթե աշակերտները դասի պասսիվ ունկնդիր չեն այլ ակտիվ փնտրողներ: Նրանք համեմատում են նոր ձեռք բերվող գիտելիքները սեփական փորձի և այլ բնագավառի իմացությունների հետ և ինքնուրույն հաստատում միջառարկայական և ներառարկայական կապեր:

Ուսումնական գործընթացում նման ռազմավարության ընդգրկումը կձևավորի աշակերտի հատուկ մտածելակերպը , ինչը բնութագրելի է որպես քննադատական մտածողություն: Այս պարագայում մեծ է ուսուցչի դերը. Նա պետք է լինի օգնական , ուղղորդող՝ նպաստելու աշակերտների իմացական կարողությունների զարգացմանը և արդյունավետ մտածողության ձևավորմանը:

Քննադատական մտածողությանը միտված դասը եռափուլ գործընթաց է :

Առաջինը՝ խթանման փուլի գործառույթներն են.

- Ուսումնասիրվող թեմայի վերաբերյալ գիտելիքների արդիականացում և վերլուծում
- Ուսումնասիրվող թեմայի վերաբերյալ հետաքրքրասիրության արթնացում

- Սովորողի մտածողության ակտիվացում , ինչը ենթադրում է հնարավորություն տալ նրան նպատակաուղղված մտածել և սեփական բառերով արտահայտել հանրահայտ միտքը

- Հետագա ուսումնասիրության գործընթացի պլանավորում: Երկրորդ իմաստավորման փուլի գործառույթներն են.

- Նոր նյութի հաղորդումը

- Դրա իմաստավորումը, ինչը ներառում է կարդալ տեքստի այն մասը, որը չի հասկացվել աշակերտի կողմից, հարցեր առաջադրել և գրի առնել այդ մասը՝ հետագայում պարզաբանելու համար

- Համադրել թեմայի վերաբերյալ նոր ստացված տեղեկությունը և սեփական գիտելիքները:

Նոր հասկացություն ստեղծելու համար սովորողները կամուրջ են ստեղծում նախկինում յուրացված և նոր հաղորդվող գիտելիքների միջև:

Երրորդը կշռադատման փուլի գործառույթներն են.

- Նոր գաղափարների և տեղեկույթի արտահայտումը սեփական բառերով

- Միմյանց և ուսուցչի հետ մտքերի փոխանակման միջոցով

ստացված նոր գիտելիքների ամբողջական իմաստավորումը և ամփոփումը

- Թեմայի ուսուցման ամբողջ գործընթացի վերլուծություն

- Ուսուցանված նյութի նկատմամբ սեփական վերաբերմունքի ձևավորում

Յուրաքանչյուրին բնորոշ են որոշակի մեթոդական հնարներ, որոնք ուղղված են իրականացնելու տվյալ փուլի խնդիրները: Քննադատական մտածողության տեխնոլոգիայի կիրառումը դասապրոցեսում սովորողներին մղում է հասնել վերջնարդյունքին, լինել անկախ, ինքնուրույն և գրագետ մտածող անձ:

Կանզասից մինչև Ղազախստան, Միչիգանից մինչև Մակեդոնիա դպրոցի ուսուցիչները և համալսարանի պրոֆեսորները ձգտում են իրենց աշակերտներիմեջ

սերմանել քննադատական մտածողության կարողությունը: Մենք գիտենք, որ քննադատական մտածողությունը բավականին լավ հմտություն է, որը թույլ կտա մեզ հաջողությամբ հաղթահարել 21-րդ դարի պահանջները և կօգնի ավելի խորը հասկանալ, թե ինչ են սովորում և անում:

Սակայն ի՞նչ է նշանակում քննադատական մտածողություն:

Նախքան տերմինին անցնելը , դիտարկենք մտավոր գործունեության որոշ տեսակներ, որոնք չենք կարող անվանել քննադատական մտածողություն: Կարծում եմ պետք է համաձայնել, որ զուտ հիշաղությունը քննադատական մտածողությաւն չէ: Հիշելը կարևոր մտավոր գործողություն է, առանց որի անհնար է ուսումնական գործընթացը, սակայն այն արմատապես տարբերվում է քննադատական մտածողությունից:

Համակարգչի հիշողությունն ավելի լավ է, քան մարդունը, սակայն դա չի նշանակում, որ համակարգչի հիշելու կարողությունը մտածելն է: Շատ դպրոցական ուսուցիչներ, ըստ հին սովորույթի, հիշողությունը մտածողությունից վեր են դասում և ստուգողական աշխատանքների ու քննությունների ժամանակ ստուգում են սովորողի հիշողության ծավալը, սակայն մենք՝ քննադատական մտածեղության կողմնակիցներս շեշտը դնում ենք մտավոր գործունեության ավելի բարդ ձևերի վրա: <<Ոչ քննադատական մտածողության >> մեկ այլ ձևը առանց որի նույնպես ուսումնական գործընթաց չի կարող լինել, կապված է բարդ գաղափարների ընկալման հետ: Կենսաբանության և մաթեմատիկայի , պատմության և գրականության դասերինսովորողները երբեմն ստիպված են գլուխ կոտրել, որ հասկանան, թե ինչ է ուսուցիչը ասում կամ ինչ է գրված գրքում: Ընկալումը բարդ մտածողական գործողություն է, հատկապես եթե նյութը բարդ է:

Օրինակ, եթե ուսանողը փորձում է հասկանալ Շեքսպիրի սոնետը կամ էլ գլուխ է ջարդում էքստրեմումի կետերի թեորեմի վրա, իր գլխում այդ ժամանակ բարդ մտավոր գործողություն է տեղի ունենում, սակայն դա դեռ քննադատական մտածողություն չէ:

Մտածողության երրորդ տեսակը, որը նույնպես չենք կարող անվանել քննադատական, դա ստեղծագործական մտածողություն է: Մարզիկի, Նկարչի, երաժշտի ուղեղը նույնպես բարդ գործողություններ է կատարում, սակայն իրենք եթե մենք չենք խոսում նորեկների, նորելուկների մասին, անգամ չեն նկատում դա: Որպես կանոն, նման մտածողական գործընթացները չեն գիտակցվում: Պատկերացնենք մի պրոֆեսիոնալ մարզիկի, օրինակ, հոկեյի աստղ ազգությամբ չեխ Յարոմիի Յագրին (որը միշտ հանդես է գալիս 68 համարի ներքո ի հիշատակ 1968 թվականին Պրահայում տեղի ունեցած իրադարձությունների): Ենթադրենք, որ դարպասներին հարվածելուց առաջ նա մտածում է մոտավորապես այնպես. <<Արդյո՞ք ճիշտ եմ ընտրել պահը: Չկա արդյո՞ք որևէ այլընտրանքային լուծում: Ինչպե՞ս կվարվեին այլ հոչակավոր խաղացողներ: Կհարվածեր արդյո՞ք հիմա Ուեյն Գրեցկին, թե՞ կսպասեր ավելի հարմար պահի: Գուցեընդհանրապես տափողակը կփոխանցեր մեկ այլ մարզիկի>>: Պարզ է, որ նման քննադատական մտածողության դեպքում Յագրն ընդհանրապես ոչ մի գոլ չէր խփի: Եվ եթե 68 համարի տակ հանդես գալը իր քննադատական մտածողության օրինակն է , ապա իր խաղային որոշումները այդպիսին լինել չեն կարող: Նույնպես նկարիչներն ու երաժիշտները իրենց աշխատանքում, հիմնվելով բարդ մտածողական գործողությունների վրա, լիարժեք չեն գիտակցում դրանք: Նրանց բնազդային մտածողությունը իր ամբողջ արժեքներով հանդերձ չի կարող համարվել քննադատական:

Ապա ինչպե՞ս սահմանել քննադատական մտածողությունը: Իմ առաջարկած սահմանումը բաղկացած է հինգ կետերից.

1. Քննադատական մտածողությունը ինքնուրույն մտածողություն է: երբ դասը կազմված է քննադատական մտածողություն սկզբունքների վրա, յուրաքանչյուրը ձևակերպում է իր գաղափարները, գնահատականները և համոզմունքները՝ անկախ մնացածից: Որևէ մեկը մեր փոխարեն չի կարող քննադատական մտածել , մենք դա անում ենք բացառապես ինքներս մեզ համար: Հետևաբար, մտածողությունը կարող է լինել քննադատական միայն այն դեպքում, երբ այն անհատական բնույթ է կրում:

2. Տեղեկությունը հանդես է գալիս որպես սկզբնակետ, այլ ոչ թե քննադատական մտածողության վերջնակետ: Բարդ միտք

հայտնելու համար հարկավոր է հսկայական քանակով <<հումք>> վերամշակել: փաստեր, գաղափարներ, տեքստեր, տեսություններ, տվյալներ , հասկացություններ: Քննադատաբար մտածել հնարավոր է ցանկացած տարիքում, ոչ միայն ուսանողները, այլև առաջին դասարանցիները դրա համար բավականին փորձ ու գիտելիք ունեն կուտակած; իհարկե, երեխաների մտածողական կարողությունները ուսման ընթացքում դեռ կատարելագործվելու են, բայց անգամ մանուկները կարող են բավականին ինքնուրույն քննադատաբար մտածել(երեխաներ ունեցողները դա լավ գիտեն):

3. Քննադատական մտածողությունը սկսվում է հարցադրմամբ և լուծվելիք խնդիրների հստակեցմամբ: Մարդն իր էությամբ հետաքրքրասեր է: Մենք որևէ նոր բան ենք նկատում և ցանկանում ենք իմանալ, թե դա ինչ է: Հետաքրքրությունը, այսպիսով, կենդանի արարածի անբաժան մասն է: Մենք ավելի շատ սովոր ենք տեսնելու դա մանուկների մոտ, քան բարձր դասարանցիների և ուսանողների մոտ, ինչն, ավաղ, դպրոցական կրթության ազդեցության արդյունք է: Սակայն ճանաչողական գործընթացը իր յուրաքնչյուր փուլում բնորոշվում է խնդրին լուծում տալու ճանաչողի ձգտումով, ինչպես նաև պատասխանելու հարցերին, որոնք առաջանում են իր իսկ սեփական հետաքրքրություններից և պահանջներից: Բրազիլացի մանկավարժ Պաուլոն Ֆրեյրեն այն կարծիքին է, որ հարկավոր է ավանդական <<կուտակային>> կրթությունը փոխարինել <<խնդրայինով>>, երբ սովորողները զբաղվում են իրական կյանքից վերցրած խնդիրներով: Դասավանդումը, ըստ իրեն, ավելի հաջող կընթանա, եթե աշակերտները ձևակերպեն խնդիրները, այդ թվում տնտեսական հասարակական և քաղաքական, իրենց սեփական փորձի հիման վրա , այնուհետ կլուծեն դրանք, օգտագործելով այն հնարավորությունները, որոնք իրեն տվել է դպրոցը:

Ամերիկացի փորձառու փիլիսոփա և մանկավարժ Ջոն Դյուին կարծում է, որ քննադատական մտածողությունը առաջանում է այն ժամանակ, երբ աշակերտները սկսում են զբաղվել որոշակի խնդիրներով: Ըստ նրա խնդիրների վրա կենտրոնանալը խթանում է սովորողների բնական հետաքրքրքասիրությանը և խրախուսում է իրենց քննադատական մտածողությանը: << Միայն իրական խնդրի հետ պայքարելով, բարդ

իրավիճակներից դուրս գալու իրենց սեփական ելքերը փնտրելով է , որ աշակերտը իսկապես մտածում է>>:

Քննադատական մտածողության ձևավորման և զարգացման մոդելներն են.

- Գիտելիք
- Ընկալում
- Կիրառում
- Վերլուծություն
- Սինթեզ
- Գնահատում:

Քննադատական մտածողությունը դա դիտարկման փորձի, դատողության, պատճառաբանության և կամ հաղորդակցության միջոցով հավաքած ինֆորմացիան ակտիվորեն և հմտորեն համակարգելու, կիրառելու , վերլուծելու, սինթեզելու և գնահատելու մտավոր գործընթաց է:

Քննադատաբար մտածելու կարողությունը, դա խնդիրները և ենթադրությունները վեր հանելու , կարևոր հարաբերակցությունները ճանաչելու , ճիշտ եզրակացություններ անելու , գնահատելու և եզրահանգումներ կատարելու հմտությունն է:

Քննադատական մտածողությունը անհատի ճանաչողական գործունեությոան գործընթացն է ուղղված իրականության ընդհանրացված և միջնորդավորված արտացոլմանը, որի ժամանակ աշակերտը իրականացնում է տարբեր տեսակի ընդհանրացումներ:

Քննադատական մտածողությունը ակտիվ հոգեկան գործընթաց է, որն ուղղված է օբյեկտիվ աշխարհի առարկաների և երևույթների էական կողմերի և դրանց ներքին կապերի միջնորդավորված և ընդհանրացված արտացոլմանը:

Քննադատական մտածողության զարգացման տեխնոլոգիան և դրա հիմնական ռազմավարությունները ապահովում են մտածողության զարգացումը, հաղորդակցական և ստեղծագործական կարողությունների ձևավորումը: Այս տեխնոլոգիան համապատասխանում է ներկա փուլում կրթության նպատակներին, աշակերտին և ուսուցչին զինում է տեղեկատվության հետ աշխատելու մեթոդներով, ուսուցման կազմակերպման, ինքնակրթության և սեփական կրթական ուղու նախագծման մեթոդներով:

ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՄԱՅՐԵՆԻԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Ուսումնական գործունեության մեջ ուսուցման բովանդակության նորացման ժամանակակից դպրոցին առաջադրվող պահանջների իրականացմանը, անձի ստեղծագործական, իմացական աշխատանքների համար կարևոր նշանակություն ունեն հետազոտական աշխատանքները: Ինքնուրույն աշխատանքով գիտելիքներ ձեռք բերելու լավագույն աշխատանքներից մեկը հետազոտական աշխատանքն է, որը անձին պատրաստի ճշմարտություններ հաղորդելու փոխարեն օգնում է նրան դնել որոնողի գիտելիքներն ինքնուրույն ջանքերով մշակողի դերում: Հետազոտական գործունեությունըստեղծագործական աշխատանք է՝ իր ընդհանուր նպատակով,խնդիրներով, համապատասխան մեթոդներով և գործունեության ձևով:

Հետազոտությունը անհայտը որոնելու , նոր գիտելիքներ ձեռք բերելու ճանաչողական աշխատանք է: Հասարակական կյանքի զարգացման արդի գործընթացներում դպրոցը նույնպես փոփոխություններ է կրում :

Աշակերտները գիտելիքները մտապահողից ու վերարտադրողից , այսինքն ուսուցման օբյեկտից, վերածվում են ուսուցման գործընթացի գործուն մասնակցի՝ ուսուցման սյուբեկտի՝ ինքնուրույն որոշումներ կայացնողի , որն էլ կյանքի հրամայական պահանջն է:

Ուսուցման ժամանակակակից տեխնոլոգիաների օգտագործումը պահանջներ է ներկայացնում ուսուցչին: Նա պետք է դառնա ոչ թե ուսումնական գործընթացի, այլ

լինի ուղղորդողի, օգնականի, խթանողի մասնակցի դերում և հնարավորություն ընձեռնի աշակերտին խորհելու և անկաշկանդ ինքնաարտահայտվելու:

Ժամանակակից տեխնոլոգիաների կիրառմամբ աշակերտները ոչ թե մեխանիկորեն պետք է մտապահեն պատրաստի մատուցված գիտելիքները, այլ եռանդուն կերպով մասնակցեն գիտելիքների ձեռք բերման գործընթացին, կատարեն համապատասխան եզրահանգումներ, դառնան հայտնագործողներէ նորը ստեղծողներ, որի դեպքում ոչ թե լուծվում են կրթական բարդ խնդիրներ, այլև ուսման գործընթացը դառնում է բովանդակալից, հետաքրքիր, ըմբռնելու համար առավել արդյունավետ:

Դպրոց մուտք գործող նորարարական մանկավարժական տեխնոլոգիաների թվին են պատկանում քննադատական մտածողության զարգացման տեսությունը:

<< քննադատական մտածողություն>> եզրույթն առաջին հայացքից բացասական երանգ է պարունակում, քանի որ զուգորդվում է քննադատել բառով: Սակայն այս բառն իր մեջ ներառում է <<քննել>> և << դատել>> բառ հասկացությունները: Այսինքն՝ որևէ հարց քննել , զննել տարբեր անկյուններից տեանկյուններից, ապա դատել և եզրահանգումներ անել :

Քննադատական մտածողությունը չունի մեկ միասնական սահմանում: Այն բարդ գործընթաց է , որը սկսվում է տեղեկատվությամբ և ավարտվում որոշման կայացմամբ:

Այսօր ձևավորվել է քննադատական մտածողության խթանման մեթոդների մի ստվար քանակություն, որոնք գտնվում են զարգացման փուլում: Կարևորն այն է, որ այս մեթոդները նպաստում են աշակերտների ճանաչողական կարողությունների, ինքնուրույն ստեղծագործական ներուժի բացահայտմանն ու զարգացմանը:

Քննադատական մտածողության խթանման բազմաթիվ մեթոդներից յուրաքանչյուրի արդյունավետ կիրառումը դասարանում ենթադրում է փոխադարձ վստահության մթնոլորտի առկայություն:

Յուրաքանչյուն երեխա պետք է ազատ ու անկաշկանդ կարողանա մտածել , ներկայացնել իր տեսակետը, մտքեր փոխանակել ու լսել դիմացինին և հաղորդակցվել ու յուրաքանչուր դասին ունենալ իր փոքրիկ ներդրումը:

Քննադատական մտածողության մեթոդների կիրառմամբ ընթացող դասի ժամանակ աշակերտները ընդգրկվում են դասապրոցեսի մեջ՝ մինչև նոր նյութի հաղորդումը (խթանումը), նյութի մատուցման ընթացքում (իմաստի ընկալումը) և նյութի յուրացնելուց հետո (կշռադատում):

Քննադատական մտածողության տեխնոլոգիայի կիրառումը նպաստում է ոչ միայն ուսման արդյունավետության բարձրացմանը, այլև լուծում է այնպիսի խնդիրներ , ինչպիսիք են աշակերտի ճանաչողական հետաքրքրությունների , նրանց ստեղծագործական մտածողության ինքնուրույն որոշումների կատարելու կարողությունների ձևավորումն ու զարգացումը ՝ թ՛ե ուսուցման գործընթացում, և թ՛ե հաղորդակցության ժամանակ:

Ստորև ներկայացվում է քննադատական մտածողության այն մեթոդները, որոնք կիրառում են <<Հացը>> դասի ուսուցման ընթացքում:

Աշխատասիրության մասին ասացվածքներով երեխաները կրկնեցին անցած նյութը:

Որպես նախապատրաստական աշխատանք կիրառելի է քննադատական մտածողության տեխնոլոգիայով առաջարկվող մեթոդներից մտավոր գրոհը:

Ստացված արդյունքի ամփոփում , դասի ընթացքում ,անհասկանալի բառերի բացատրում:

Որից հետո օգտագործվում են համագործակցային ուսումնասիրության պարզ օրինակ (խմբային աշխատանք), որի դեպքում աշակերտների փոքր խմբերը համատեղ աշխատանք են անում որևէ նպատակի իրականացման կամ խնդրի լուծման համար:

Աշակերտներին բաժանում ենք խմբերի հետևյալ կարգով, հերթով մոտենում են ուսուցչուհուն և սեղանին դրված տուփից վերցնում են մի թերթիկ, որի վրա նկարված է որևէ միրգ՝ խնձոր, տանձ և այլն:

Ըստ այդ պատկերների երեխաները հավաքվում են սեղանի շուրջ: Խմբերը ջանում են պատասխանել հետևյալ հարցերն.

- Ովքե՞ր են ստեղծագործության հերոսները:
- Տարվա ո՞ր եղանակն է նկարագրված
- Ստեղծագործությունից դուրս գրեք ուղղագրական նշանակություն ունեցող բառեր
- Այլ կերպ ինչպե՞ս կվերնագրեք ստեղծագործությունը

Աշխատանքն ավարտելուց հետո խմբի անդամներից յուրաքանչյուրին ներկայացվում է իր ներդրումը:

Խմբային աշխատանքի արդյունքում ստացվեցին հետևյալ արդյունքները.

1. Պապիկը և թոռնիկը
2. Եղանակը գարուն

Ոսկե երանգ, այլուր հորթ, խեղճ

3. Միամիտ երեխա

Խմբային աշխատանք 2

1. Պապիկը և որդին
2. Գարուն
3. Աղբյուր, հորթ, խեղճ
4. Որդին և հացը

Խմբային աշխատանքի ավարտին երեխաները շոշափում են ալյուրը և խմորը , իրենց ձեռքով ցորենի հասկից առանձնացնում են հատիկները:

Այնուհետև կիրառում են քննադատական մտածողության տեխնոլոգիայով առաջարկվող մանրակերտի մեթոդը: Ելնելով երեխայի տարքային

առանձնահատկությունից այս մեթոդով նախատեսված հարցերը կարելի է կազմել հետևյալ կերպ.

Հարց

Ո՞րն է սեղծագործության ամենակարևոր բառը:

Պատասխան

Պապիկ, որդի, հաց, ալյուր, ջուր,քրտինք:

Հարց

Ո՞րն է բանաստեղծության ամենակարևոր նախադասությունը

Պատասխան

Պապիկը խորը ցավ զգաց իր սրտում :

Չի կարելի հաց նետել:

Հացը պատիվ է:

Հարց

Շարունակեք հետևյալ նախադասությունը: Ամենակարևորն այն է ,որ.....:

Պատասխան

Ամենակարևորն այն է, որ հացը սուրբ է: Ամենակարևորն այն է,որ հացը հրաշք է:

Այս առաջադրանքներից հետո երեխաները իրենց <<հրաշք տետրում>> գծում են ռուբրիկ և այն լրացնում են անհատապես: յուրաքանչյուրը իր ռուբրիկը անհատապես է լրացնում, որ յուրաքանչյուրը յուրովի խորհի իր գործողությունների մասին և գնահատի սեփական արարքները:

Գնահատման աղյուսակ

Անուն Ազգանուն –Միշտ, Երբեմն, երբեք

Ես ավելացած

հացը նետում են

Հացի փշրանքը տալիս եմ թռչուններին

Լսում եմ պապիկիս խրատները

Նշումները կատարվում են V նշանով:

Տնային առաջադրանքը հացի մասին տեղեկություն հավաքելը ոչ միայն հանրագիտարանից ,այլև տատիկներից ու պապիկներց , մայրիկներից ու հայրիկներից:

Որից հետո աշակերտները ճաշակում են անուշաբույր հացի գրեթե բոլոր տեսակները:

Հաջորդ օրը ներկայացնում են հացի մասին իրենց հավաքած տեղեկությունները և ընթերցում իրենց գրած ստեղծագործությունները:

Կ իրառվեց նաև բանալի բառի մեթոդը , որի կիրառման ժամանակ դասից ընտրվում է 4-5 բառեր դրանց միջոցով աշակերտները հորինում են մի փոքրիկ պատմություն, որի շնորհիվ զարգացնում են երեխաների երևակայությունը ,ստեղծագործական միտքը, կապակցված խոսք կառուցելու ինչպես նաև սեփական մտքերը շարադրելու, գրի առնելու կարողությունները:

<<Հաց>> դասից ընտրեցինք հետևյալ բառերը.

- Քրտինք
- Մեծ
- Միտք

- Չորացած

ԵՎ այս բառերով աշակերտները գրեցին շարադրություններ և պատմություններ:

Օրինակ՝ Մեծ քրտինք

Մի մարդ լավաշ գնեց: Լավաշը դրեց սեղանին և մոռացավ: հետո միտք արեց և ցանկացավ ուտել: Նա տեսավ , որ լավաշը չորացել է :

Վերջում կիրառեցինք ակրոստիկոսի հնարը:

Հատիկն ընկավ հողի մեջ՝
Արևի տակ տաքացավ

Ցորենի ծիլ դուրս եկավ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Այսպիսով, եթե ավանդական դասի ընթացքում լուծվում են մի շարք ուսումնական խնդիրներ՝ գիտելիքի ձեռք բերում, նոր և ուղղագրական բառերի յուրացում , վարժ կարդալու կարողության ձևավորում և զարգացում՝ կոնկրետ տեքստի շրջանակներում, ապա քննադատական մտածողության զարգացման մեթոդների կիրառմամբ վերը նշվածներից զատ՝ լուծվում են նաև այլ ուսումնադաստիրակչական խնդիրները: Իրականացվեց լուրջ ճանաչողական մտավոր աշխատանք: Երեխաները ձեռք բերեցին ստեղծագործելու, հաղորդակցվելու, արտահայտվելու, իրար լսելու կարողություն: Ձևավորվում է վստահություն՝ սեփական ուժերի նկատմամբ ինքնագանահատման, մյուսներին գնահատելու և մի շարք այլ կարևոր կարողություններ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Դեվիդ Կլաուստեր - Ի՞նչ բան է քննադատական մտածողությունը
2. Ջ. Սթիլ, Ք.Մերեդիթ, Չ.Թեմփլ - Քննադատական մտածողության համակարգը ուսումնական ծրագրի ողջ համատեքստում (ուղեցույց Հ/Լ Հ/V)
3. https://multiurok.ru/files/k-nnadatakan-mtatsoghowt-yan-zargats-man-met-odner.html
4. https://geomanto.ru/hy/awnings/tehnologiya-razvitiya-kriticheskogo-myshleniya-mladshih-shkolnikov.html